

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կես տարվան 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлиси, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է լ է Ք օ Ն № 253.

ՀԱՅԿԵՍՏԱՆԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Գրիգոր, Ստեփան եւ Շուշանիկ Սուրբառեանները սրտի ցաւով յայտնելով, առաջինը իր անստանալի ամուսնու, երկրորդը եղբոր կնոջ, երրորդը տէգրակնոջ,

ԿԱԼԻՊՍԷ ՍՈՒԼԻԱՆԵԱՆՏԻ

մահը խնարհաբար խնդրում են իրանց ազգականներին, բարեկամներին եւ ծանօթներին՝ յարգել հանգուցեալի յիշատակը, ներկայ լինելով նրա հոգեհանգստին, որ լինելու է ամենայն երեկոյ, ժամը 6-ին, Զուրաբովի տանը, Կասաթիլեակայա փողոցում: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ստորագրող աստեր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մամուլ. երկրաչափից մեծալմաների օգտին.
Նամակ Շուշուց. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՍԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍՏԻՐԱՎԱՆ. Լէյպցիգի հայ-ձեռնարանական ընկերութիւնը:

ՍՏՈՐԱՅՆՈՂ ԱՍՏԵՐ

Յունվարի 26-ին Պետերբուրգում մի հեղինակաւոր ժողով, որին մասնակցում էին նշանաւոր իրաւաբաններ, բժշկիկներ եւ բարձր պաշտօն ունեցող անձեր, օրինակ պրոֆէսորներ՝ Ֆոյնիցկի, Կրիլ, Սվեշնիկով, բժիշկներ՝ Կովալեւսկի, Չերեմիշնիկ, Ուսպենսկի, սենատորներ՝ Ֆուկս, Կարնիցկի եւ ուրիշներ, քննում էր ժողովրդական մարմինը եւ բարոյականութիւնը բարձրագոյն երկու մեծ աստերին, այն է ՏԵՐԻՆ Եւ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻ Եւ ԵՐԵՄԻՆՈՎԻ մէջ եղած յարաբերութեան հարցը: Ժողովականների բերած բազմաթիւ վկայութիւնները ցոյց էին տալիս, որ ՏԵՐԻՆ այնքան ճշնոյթ, ցնցող տպաւորութիւն է թողնում իր ներսին, որ շատ անգամ ստիպում է վերջինին դիմելու օղիի դործածութեան, որպէս զի դրա թմրեցող ազդեցութեան տակ մոռանայ նա իրան հասցրած անարդարքը եւ անպատուութիւնը: ՏԵՐԻՆ մի քանիսի վրա այնքան ծանր ազդեցութիւն է թողնում, որ ստատիկ յուզմունքից թունաւորվում է արիւնը մարդու երակների մէջ եւ պատճառ դառնում լուրջ տկարութիւնների:

Այդպիսով ՏԵՐԻՆ Եւ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՆՆԵՐ, որոնցից իւրաքանչիւրը ինքն ըստ ինքեան շատ ստորացուցիչ է միասակար մի ասիւն է, ապրում են միմեանց վրա եւ ուժեղացնում միմեանց փոխադարձաբար: Նրանք ազդում են ճշնոյթ կերպով մանուկ սերնդի բարոյականութեան վրա եւ ստոր

վիճակի մէջ պահում մարդկային անձնաւորութեան արժանապատուութեան գաղափարը:

ՏԵՐԻՆ, որ վայրենի դարերից մնացել է մինչեւ մեր օրերը, մինչեւ քսաներորդ դարի սկիզբը, իբրեւ մի խայտառակ ժառանգութիւն, եւ ինչեցնում է մեզ մեր հայրերի եւ պապերի կրած անպարտ անարդարքները՝ անկասկած մօտենում է իր գոյութեան վերջին շրջաններին եւ կամայ կամայ պէտք է անհետանայ, տեղի տալով աւելի վայելուչ վերաբերմունքի դէպքի անհատի անձնաւորութիւնը: Սակայն մեր երկրի խուլ անկիւններում դեռ այնքան դանդաղ է լայսի եւ դիտակցութեան շարժումը, որ մարդ յուսահատաբար նկատում է, թէ զուցէ դեռ կանցնեն տասնեակ տարիներ, եւ մենք չենք ազատվի այդ ստորացուցիչ արատից մեր ազգաբնակչութեան կեանքի մէջ:

Իսկ ինչ վերաբերվում է ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՆՆԵՐ, նա ամենեւին չէ ցոյց տալիս անհետանալու նշաններ: Ընդհակառակը, շատ տեղերում նա կատարել է եւ կատարում է նոր նուաճումներ եւ այն աստիճան բարձրացումներ է առաջ բերել, որ եւրոպական երկիրներում սկսվել է դիտականների եւ հասարակական գործողների կողմից մի ամբողջ շարժում՝ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՆՆԵՐ վարդապետի դէմ, իբրեւ ժողովրդական մասսաների ամենակատաղի թշնամիներից մէկի դէմ:

Ծաւ է, որ մասսաները ոչ միայն չեն կարողանում ձեռք բերել նոր տարրեր իրանց բարեկեցութիւնը բարձրացնելու համար, այլ եւ ենթարկվում են նոր թշուառութիւնների պատուհասներին, ոյժ չունենալով նրանց դիմադրել ուժեղ կերպով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՍՈՒԼ

«Ինչու պէտք է աշողութիւն ցանկալ բօքս»

հայ-ուսանողները իբրեւ ազգակիցներ եւ ընկերներ, շարունակ յարաբերութեան եւ չիման մէջ պիտի լինէին, որը հարկաւոր էր պատշաճ կարգաւորութեան մէջ դնել, ներկայումս իրար չը խանգարելու, այլ ընդհակառակն օգնելու եւ նպաստելու եւ իրար ի մօտոյ ձանաչելով՝ ապագայ գործունէութեան ասպարհներում անհրաժեշտ համերաշխութիւն ունենալու համար: Ժողովներին մասնակցում են ԵՄԱԿԻ Եւ ՀԱՎԻՆՆԵՐ ուսանողները եւ ուրիշ քաղաքներից գրվում են անդամ. այդպիսով գործօն եւ ոչ գործօն, (տեղիս համալսարանում չը գրված՝ նորեկ ուսանողները, ինչպէս եւ ուրիշ համալսարաններում սովորողները գործօն անդամ չեն կարող լինել) անդամներ թիւը առաջին՝ 84 թիւի ամառնային կիսամակում լինում է 13, յաջորդ կիսամակին արդէն սկսում է նուազել եւ այդպէս շարունակաբար. 86-ի ամառը միայն չորս ուսանող է լինում, իսկ 86—87-ի ձմեռը նրանց թիւը 2-ի իջնելով՝ ընկերութիւնը դադարում է գոյութիւն ունենալուց եւ գոյքն ու գրքերը յանձնվում է համալսարանին, ընկերութեան կանոնադրի տրամադրածի համաձայն:

Այս դարձը տեսնում է 6 տարի, մինչեւ 1892 թվականը, երբ «անսպասելի կերպով՝ բազմաթիւ հայ ուսանողների թիւը» ընկե-

ներին.—այս հարցը դնում է առաջ շատ յարգելի գիտնականներից եւ հասարակական համակրելի գործիչներից մէկը, պրոֆէսոր ԳԵՐԻԷ «Русскія Вѣд.» լրագրի մէջ: Թէ հեղինակը եւ թէ լրագրի, որի էջերում երեւան է գալիս նա այդ հարցով, չեն պատկանում ուրիշ տեղի անդիտատեսներին, ինչպէս առհասարակ ոչինչ չօլինիստական հակումներ չունեն. ազգային անապարծութեան քրմերի հակառակորդներ են: Հետեւաբար կարելի է լսել յարգելի պրոֆէսորին ամենայն վստահութեամբ: Իբրեւ պատմագետ՝ նա հարցին նայում է պատմական տեսակէտից: Քսանական թվականներին եւրոպական հասարակութիւնը շեղում համակրութեամբ էր վերաբերվում յունական ապստամբութեան, որի նպատակն էր թիւրքաց լուծից ազատվելը. այն ժամանակ հռչակաւոր պատմագետ Նիբուր իր դասախօսութիւնների մէջ ցուցում էր տանջված սուլթանների մասին, իսկ Բարոն, իր փառքի գագաթնակէտին հասած, Միասորունի բերդի պաշտպանների շարքերը մտաւ: Այդ ընդհանուր համակրութիւնը մի փայլուն չէր եւ կազմում եւրոպական հասարակութեան պատմութեան մէջ: Բայց աւելի լայն եւ աւելի միասնաբար է այժմեան համակրութիւնը դէպի բօքսները, եւ Լիսաբոնից մինչեւ Վլադիվոստոկ ամենքը անհամբեր սպասում են, թէ ինչ լուրեր կը գան պատերազմական դաշտից:

Այս զարմանալի համերաշխութեան մէջ, ի հարկէ, փոքր դեր չեն կատարում քաղաքական շահերը: Պօրտուգալացիները երկիւղ են կրում իրանց Դեկադա ծովածոցի համար. սպանիացիները բարկացած են Կուբայի պատճառով. Ֆրանսիացիները, որոնք չեն մոռացել Վատերոն յիշում են Ֆայոյան. գերմանացիները մտածում են, որ եթէ Անգլիան ձմէ բօքսներին, դրանից յետոյ հեշտ կը լինի նրա համար խորտակել գերմանական զարգացող շահուտուրը եւ գերմանական նաւատորմի ցնորքները. իսկ թէ ինչ են մտածում ուսանողները.—այդ ամեն մէկին յայտնի է: Սակայն որքան էլ մարդու խղճի վրա ծանրացած լինի նրա հայրենիքի քաղաքականութիւնը, բայց, բարեբախտաբար, նա բացի այդ զգացմունքից կարող է դիվանագիպական դժարութեան եւ դէպի թոյլն ու հարաւորաբար ունեցած համակրութեան զգացմունքով: Շատ հազար մարդիկ, որոնք առաջ երբէք չեն լսել բօքսների մասին եւ չէին էլ կարողանում արտասանել նրանց անունը, աշողութիւն են ցանկանում նրանց միայն այն պատճառով, որ նրանք կանգնած են իրանց անկախութեան համար եւ ամենաքեզ, թողնելով իրանց կանայք, երեխաներին եւ հասած արարելը, շտապեցին իրանց առաջնորդների հրամանի տակ մտնել եւ նշան դառնալ զուս-զուս դժգոհների եւ լիբերալիստների առաջ:

Բայց բօքսները միայն այժմ չեն ներկայ-

անում իբրեւ ազատութեան գիտողներ: Յօդուածագիրը ասում է, որ եթէ մենք ձանաչենք բօքսներին, իմանանք թէ ովքեր են նրանք՝ մեր մէջ աւելի եւս վառ կը լինի նրանց աշողութիւն ցանկանալու զգացմունքը: Եւ պրոֆէսոր Գերիէ դիմում է պատմութեան: Տասնինը դար մեզանից առաջ Տրանսպալի բօքսների նախնիները երեւան եկան պատմութեան հօրիզոնի վրա իբրեւ հոռւակաւ տիրապետութեան դիմադրողներ, եւ Տայիտ նկարագրում է, թէ ինչպէս «բատակներ» (հօլանդացիների) ժողովրդական հերոս Յիլվիլա ապստամբութիւն յարուցեց աշխարհածաւալ պետութեան դէմ, որի լուծը ստրկութիւն էր նուաճվածի համար: Այդ հերոսական ջանքերի շնորհիւ Հոմը չը կարողացաւ իր ամենի թաւը դնել Հիւսիսային ծովի ափերում, անապատ, աղքատ, բնութիւնից զրկված տեղերում ապրող ժողովրդի վրա: Յայտնի է թէ այդ անհիւրընկալ վայրերում բնակութիւն հաստատած նիդերլանդական ազգը սրբաբալ կուլտուրական հրաշքներ գործեց, հող նուաճելով ծովից, ծաղկեցնելով երկրագործութիւնը ձահիճների վրա, առեւտուր սկսելով աշխարհի զանազան կողմերի հետ: XVI դարում այդ փոքրիկ երկրը զարմացեց աշխարհը իր հերոսութիւններով: Դա այն ժամանակն էր, երբ սպանիական իշխանութիւնն էր տարածված Հօլանդիայի վրա եւ երկաթէ լուծը ստակալի կերպով ճնշում էր ազատութեան սիրահար ժողովուրդը: Հօլանդացիները ոտքի կանգնեցին՝ իրանց ազատութիւնը արիւնով նուաճելու համար: Սպանիական բռնակալութիւնը ստորադի սարսափի յետևից էր թափում ինքնճերի վրա. մի կողմից սպանիական զօրքերն էին կատաղի արշաւանքներ գործում, քանդում, այրում, կոտորում, միւս կողմից կաթօլիկ հոգեւորականութիւնն էր զարնուրել հալածանքներ յարուցանում հերետիկոսների դէմ: Եւրոպայումս ինկվիզիցիայի» խարդախութիւնը հաղթարաւոր մարդիկ էին լսելով իրանց բողբոյ մէջ: Ահա այդ ժամանակ տանջված ազգի մէջ երեւան եկաւ ժողովրդական սքանչելի հերոս Վիլհելմ Օրանացին: Ազատամարտ, բարեպաշտ, սովորւած ժողովրդի ուղին ձուլելից իր հերոսի ոգու հետ, եւ ինչպէս փոխութիւնը իր փոխութեան աշողութիւններով եւ անաշողութիւններով փայլեցնում էր այդ ժողովրդի զարմանալի սովորութիւնը, հաւատը դէպի արդար գործի յաղթանակը: Պրոֆէսոր Գերիէ բերում է մի քանի հանգամանքներ այդ հերոսական կոնքերի ժամանակից, բայց լրագրական յօդուածը, որ հարկէ, չէ կարող պատկերացնել ամբողջ գործը: Մօտեց երեք ասուար հատոր է նուիրել նիդերլանդական յեղափոխութեան, որի նման հերոսական գործ հազիւ

են համարում ընկերութեան նպատակը դնել յօդուածի հարաւոր է եւրոպական կեանքը ծախսող հայ ժողովրդին, եւ ընդհակառակն, հայկական կեանքի եւ մասնազգրութեան նշանաւոր երեւոյթների մասին ծանօթութիւն տալ եւրոպացիներին: Թէ որքան կարող էր իրականանալ այս նպատակը՝ ուրիշ ինչո՞ր է, միայն թէ ընկերութիւնը միշտ գիտակ է եղել իր ուսանողական բնաւորութեանը եւ չէ ձեռնարկել իր ոյժից եւ կարողութիւնից վեր գործի: Ամենաառաջին եւ գրեթէ միակ գործունէութիւնը կայացել է հերթական նիստերին դասախօսութիւններ, ընթերցանութիւն, կարգաւոր մէջ, որոնք ներքին ընտրութիւնը իւրաքանչիւրի ազատ կամքին է թողած: (Նորերս ներքին ընտրելու ազատութիւնը սահմանափակելու առաջարկութիւնն եղաւ, բայց չընդունվեց): Ընկերութիւնն ունի եւ դրամարկը, որտեղից երբեմնակի օգնութեան կարօտ (անդամներին ինքնաուսուլթեամբ օգնել է, որով ժամանակի ընթացքում բաւականաչափ առնելիքներ են գոյացել, իսկ փոխառուները յաճախ անուշադրութեամբ են վերաբերվում ընկերութեան ապագիկները հաւաքելու համար արած դիմումներին). սակայն ընկերութիւնը նպատակ չէ դրել չբարձր ուսանողներին օգնելը, այլ դրամարկը ծառայում է բացառաբար դրամա-

ԲԱՆԱՍՏԻՐԱՎԱՆ

Լեօնիդ ԶԱՅ-ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(Հիմնարկութեան 15-ամեակի առթիւ)

1884 թիւ մայիսի 3-ին տեղի է ունենում Լէյպցիգում «Գերմանիայի հայ-ուսանողական ընկերութեան» առաջին նիստը: Նոյն թիւի մարտի 2-ին եւ նրանից առաջ կայացած ժողովներում, որոնց մասնակցել են Լէյպցիգի եւ Հալլէի հայ ուսանողները, թուով 9 հոգի, կազմում են ընկերութեան կանոնադրութիւնը, որն ապա ներկայացնելով համալսարանի վարչութեանը՝ սրա հաւանութիւնը եւ վաւերացումն են ստանում:

Դա առաջին (եւ դժբախտաբար մինչեւ այժմ միակ) ընկերութիւնն է ամբողջ Գերմանիայում եւ ներկայումս գոյութիւն ունեցող Եւրոպայի հայ-ուսանողական ընկերութիւններից ամենահինը:

Ընկերութիւնն իննսը մի անհրաժեշտութիւն էր Գերմանիայի այս կենտրոնում, ուր

Եթէ եղիկ են կամ կան թերութիւններ, բռնէ երբէք անուղղիկ կամ կորստաբեր պէտք է համարել, ընկերութիւնը լրջօրէն աշխատել է դրանցից խուսափել եւ ձգտում դէպի տեւական առաջադիմութիւն, որն իր քաջանշիւր մէկը ի սրտէ կը ցանկանայ, ի հիմնադրութեան 15-ամեակը տօնելու առթիւ միացնենք եւ մեր բարեմաղթութիւնները ցանկանալով յարատեւութիւն եւ օգտակար գործունէութիւն:

